

**Հարցաշար**  
**«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի**  
**Հարապետական փուլ**  
**8-րդ դասարան - 120 րոպե**

**N 1 - 4**

**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

**1. Զաքարիայի թերահավատության պատճառով հրեշտակը նրան ո՞ր կարողությունից առժամանակ զրկեց. (0,5 միավոր)**

- |             |            |
|-------------|------------|
| 1) տեսնելու | 3) խոսելու |
| 2) լսելու   | 4) զգալու  |

**2. ՀՀ տարածքում գործող թեմերի առաջնորդանիստ եկեղեցիներից քանի՞սն են կրում Ս. Գրիգոր Լուսավորչի անունը. (0,5 միավոր)**

- |      |      |
|------|------|
| 1) 1 | 3) 3 |
| 2) 2 | 4) 4 |

**3. Թողիկ ճգնավորին և Հովելին երևացած լուսեղեն խաչի ու լույսի 12 սյուների տեղում ո՞ր եկեղեցին է կառուցվում. (0,5 միավոր)**

- |               |                       |
|---------------|-----------------------|
| 1) Ս. Նշան    | 3) Ս. Խաչ             |
| 2) Ս. Շողակաթ | 4) Բարձրահայաց Ս. Խաչ |

**4. Ո՞ր երկրների միջև է մղվել հանուն քրիստոնեական հավատի աշխարհում տեղի ունեցած առաջին պատերազմը. (0,5 միավոր)**

- 1) Պարսկաստանի և Հայաստանի
- 2) Հռոմեական կայսրության և Հայաստանի
- 3) Բյուզանդիայի և Հայաստանի
- 4) Արաբական իսլամիզացիայի և Հայաստանի

**N 5 - 9**

**Կառուցված պատասխանով առաջադրանքներ**

**5. «Ով իր անձը խոնարհեցնում է ինչպես այս \_\_\_\_\_ ը, երկնքի արքայության մեջ նա է մեծ»:** (1 միավոր)

6. Ըստ \_\_\_\_\_ թ. Դվինի եկեղեցական ժողովում ընդունված կանոնի՝ արգելվում էր պավլիկյաններին օթևան տալ, խոսել և ճանապարհ գնալ նրանց հետ: (1 միավոր)

7. Ս. Մարիամ Աստվածածինը վերջին անգամ ելնում է \_\_\_\_\_ լեռը, ապա վերադառնում տուն և իրեն հրաժեշտ տալու եկած առաքյալների ներկայությամբ էլ մահանում է: (1 միավոր)

8. Աղթամարում են աթոռակալել \_\_\_\_\_ հաջորդած երեք Հայոց կաթողիկոսները: (1 միավոր)

9. \_\_\_\_\_ կաթողիկոսը կարգալուծ է անում և պատժում թոնդրակեցիներին հարած Հարք գավառի եպիսկոպոսին: (1 միավոր)

**N 10 - 11**

**Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը՝ 4 կամ 5 փաստից**

10. Թագուհու անունը համապատասխանեցնել իր թագավոր-ամուսնու անվանը. (1 միավոր)

- |                       |              |
|-----------------------|--------------|
| 1. Տրդատ Գ            | ա. Կատրամիդե |
| 2. Գագիկ Ա Բագրատունի | բ. Մլքե      |
| 3. Գագիկ Արծրունի     | գ. Հեղինե    |
| 4. Հեթում Ա           | դ. Աշխեն     |
|                       | ե. Զապել     |

1	
2	
3	
4	

11. Հայոց եկեղեցու բարձրաստիճան հոգևորականի անունը համապատասխանեցնել իր գլխավորած նվիրապետական աթոռի անվանմանը. (1 միավոր)

1. Ամենայն Հայոց կաթողիկոսություն
2. Աղվանից կաթողիկոսություն
3. Աղթամարի կաթողիկոսություն
4. Սսի կաթողիկոսություն
5. Երուսաղեմի հայոց պատրիարքություն
6. Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքություն

1	
2	
3	
4	
5	
6	

- ա. Հովհաննես Է Ջալալ
- բ. Հովակիմ եպիսկոպոս
- գ. Հովհաննես Հերմոնեցի
- դ. Հովհաննես եպիսկոպոս
- ե. Կարապետ Եվդոկացի
- զ. Կիրակոս Ա Վիրապեցի
- է. Ջաքարիա Գ

**N 12 - 13**

**Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից**

**12.** «Եվ ինչպե՞ս կարելի է այդ իմ հիվանդ ոչխարը փոխել առողջ գազանի հետ, որի հենց առողջությունը մեզ համար պատուհաս է»:

**1.** Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը: (1 միավոր)

---

**2.** Ըստ պատմիչի՝ ո՞վ է ասել վերոհիշյալ խոսքերը: (1 միավոր)

---

**13.** «Մուրբ Աստուած թագաւորդ մեր Քրիստոս, որ իջեր ի Հօրէ և մարմնացար ի Սրբոյ Կուսէն. Աստուած հարցն մերոց:

Մուրբ Աստուած, որ աղբիւրդ ես անսպառ լցուցեր զմարգարէսն և զառաքեալսն աւետարանել զՔեզ. Աստուած հարցն մերոց»:

**1.** Ու՞մ է վերագրվում վերոհիշյալ շարականը: (1 միավոր)

---

**2.** Ե՞րբ է երգվում այս շարականը: (1 միավոր)

---

N 14 - 16

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի  
իմացություն պահանջող առաջադրանք:

N 14

14.1. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում n՞րն է ավելորդ: (0,5 միավոր)

Ս. Մկրտություն, Ձեռնադրություն, Ս. Դրոշմ, Ս. Հաղորդություն, Ապաշխարություն:

---

---

14.2. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում n՞ր տոնն է ավելորդ: (0,5 միավոր)

Սուրբ Ծնունդ, Սուրբ Սարգիս, Սրբոց Ղևոնդյանց, Սրբոց Վարդանանց, Բուն Բարեկենդան,  
Համբարձում:

---

---

N 15

15.1. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված. (1 միավոր)

- ա. Վաղարշապատ, Օշական, Նորագավիթ, Մուղնի, Աղավնատուն
  - բ. Վաղարշապատ, Օշական, Շենգավիթ, Կարբի, Աղավնատուն
  - գ. Վաղարշապատ, Օշական, Նորագավիթ, Աշտարակ, Մաստարա
- 
- 

15.2. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված. (1 միավոր)

- ա. Խալդի, Թեյշեբա, Խուբա, Իշպուհինի
  - բ. Խալդի, Թեյշեբա, Խուբա, Շիվինի
  - գ. Խալդի, Թեյշեբա, Բուդդա, Ինդրա
- 
-

N 16

1. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ.

(2 x 0.5 = 1 միավոր)

- 1) Հոգևոր աստիճանների ամբողջական համակարգը կոչվում է կրոնապետություն:
- 2) Ջրօրհներից հետո քահանան օրհնված ջուրը խաչաձև ցողում է եկեղեցու պատերին և խնկարկում եկեղեցին:
- 3) Պահք պահելով մարդիկ ապաշխարում են, գղջում գործած մեղքերի համար և մարմինը մաքրում վնասակար ու ավելորդ նյութերից:
- 4) Տասը պատվիրաններում Աստված պատվիրում է հարգել ծնողներին, մարդ չսպանել, գողություն չանել, սուտ չխոսել, սիրել հարազատներին:
- 5) Վերնատանը օրհնելով աշակերտներին՝ Հիսուս նրանց պատվիրեց գնալ և տարբեր ազգերի մեջ տարածել Իր պատգամները:


2. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ.

(2 x 0.5 = 1 միավոր)

- 1) 356 թ. Ս. Ներսես Մեծը թողնում է կաթողիկոսական վարչական պարտականությունները և զբաղվում միայն ժողովրդի հոգևոր հոգսերով:
- 2) Ս. Սահակ Պարթև կաթողիկոսը Հայաստանի միասնականության վերականգնման նպատակով աջակցում և օժանդակում էր հայոց Խոսրով IV թագավորի ջանքերին:
- 3) Գյուտ կաթողիկոսն ամեն կերպ աջակցում էր քրիստոնեական հավատի պաշտպանության համար Սասանյանների դեմ ապստամբած Աղվանից Վաչագան Բարեպաշտ թագավորին:
- 4) 1307 թ. Սսի եկեղեցաժողովում քաղկեդոնականության ընդունման մասին որոշումից հետո եվրոպական երկրները հայերին օգնելու համար խաչակրաց նոր արշավանք կազմակերպեցին:
- 5) Բյուզանդացիներին պատասխանելու համար Հայոց կաթողիկոս Գրիգոր Դ Տղան 1178 թ. հրավիրում է Հռոմկլայի համահայկական Եկեղեցական ժողովը:


N 17

Շարադրանք (2 միավոր)

Ներկայացրեք և գնահատեք հայոց եկեղեցու հոգևոր-մշակութային գործունեությունը Չաքարյան Հայաստանում:

Ներկայացրեք Մեծ Հայքի և Կիլիկյան Հայաստանի եկեղեցական հարաբերությունները: